# ՆՈՐ-ԴԱՐ

№ 127 ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 2 Օգոստոսի 1894 Երեքշաբթի, 2 Օգոստոսի ՏԱՍՆԵՒՄԷԿԵՒ.

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կոպէկ։
Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».
Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ... ամը 9-ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունուում ... լեզուներով։ Յայտարարութիւնների գառին 2 կ., րեկլամների ... ար կրկնապատիկ
Համառօտ դրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Անամօթութեան հերոսները։
Քրոնիկոն. — Պատրիարքական տեղապահի ընտրութիւն։ Ձեմարանի ուսուցչական խումբ։ Սրապիօն էֆ. Մուրադ։ Ֆինանսների մինիստրի օգնականի Թիֆլիս ժամանումը։ Ելիզեվգորֆից։ Շուշուց։ Ֆիզական կանոնադրութեան վերաքննութիւն։ Սարխլամիշից։ Մելիքջալի վերացումն։ Ղուրայից։ Քուլթայիսից։ Մարջից։
Ռուսը Արեւելքում։
Թղթակցութիւններ. — Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլսոյ։
Քաղաքական. — Կաղերիօն երդուեալների գատարանում։
Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական.—Հրապարակախօսների համաժողովը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

---

Թիֆլիս, 1 օգոստոսի 1894 Թ.

## ԱՆԱՄՕԹՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

—

Զարմանալի է հայ ազգի բաղդը. Զուրկները նրա գլխից անպակաս են միշտ։

19-րդ դարումս ոչ միայն ամբողջ ազգի, ոչ միայն մի համայնքի, այլ և անհատ մարդու պատիւն ապահովուած պիտի համարենք չարամիտ և չարագործ մարդկանց յարձակումներից։

Բայց ինչ ենք տեսնում։ Այժմ էլ գոյութիւն ունին Կեսարիայի Մարկոս միտրապոլիտի նման մարդիկ, որոնք գործում են ազատ, արձակ, հրապարակի վրայ, մինչև անգամ— մամուլի մէջ։

Ինչ է հայ ժողովրդի յանցանքը, ինչ են ուզում այդ խեղճ ժողովրդից զանազան Մարկոսներ ու Զուրկները, որոնք երբեմն-երբեմն անամօթաբար ձեռք են բարձրացնում նրա պատուի, նրա զգացումների վրայ։

Սմենահին ժամանակներից հայ ազգը յայտնի է իբրև վերին աստիճանի տիրասէր և հաւատարիմ հպատակ։

Փաստ է, պատմական անհերքելի փաստ, որ Հայն իւր հարազատ, արիւնակից տէրին այնքան անձնուիրութեամբ չի ծառայել, որքան օտարին։

Պատմական այն նշանաւոր րոպէում, երբ Հայի ամենանուիրական զգացումները ոտնահարւում էին, երբ նա ամեն կողմից նեղւում, տանջւում էր, երբ սուրը ձեռքին պատրաստ էր և ըստ ամենայնի իրաւունք ունէր տիրապետող լուծը թօթափել, ահա այդ նշանաւոր րոպէին ենք տեսնում, Հայը մոգակրօն Պարսկաստանին այս խօսքերն էր ասում. «Մեր կրօնը մեզ պատուիրում է թէ՝ ծառայել, հնազանդ եղէք ձեր տէրերին»։

Պատմական վաւերագիրը է այս, տիրասիրական և հաւատարմական խորին զգացումների ջերմ արտայայտութիւն։

Բայց անամօթութեան հերոսները Հային անհաւատարմութեան մէջ են մեղադրում։

Հայի մասին վայր ի վերոյ դատողութիւնները տալը, Հային հայհոյելը, անպատուելը սովորական բան է դարձել մի կարգ անպատկառ մարդկանց համար։ Եւ դրա համար մի առանձին քաջութիւն էլ հարկաւոր չէ։ Ինչ է պատճառը։

Պատմութիւնը մեզ ասում է, որ Հայ ազգն ամբողջ 15 դար կրել է խաչի ծանրութիւնը։ Նա ամենաթանկագին գանձեր, մինչ իսկ իւր արիւնն է մէջ բերել մարդասիրութեան գաղափարի համար։ Ամբողջ 15 դար նա քաջութեամբ դիմագրել է հազար ու մի խուժադուժ ազգերի, վայրենի ցեղերի և մէն ու մենակ արեւելքում քրիստոնէութեան գաղափարն է պահպանել։ Մոգական Պարսկաստանի, մահմեդական Արաբիայի, վայրենի թաթարների ու մոնգոլների սրերին Հայը դէմ է դրել իւր կուրծքը և չի թողել, որ Ասիայում աւետարանի և քաղաքակրթութեան լոյսը հանգչի։

Բայց այդ ամենի փոխարէն անամօթութեան հերոսները յանդգնում են այսօր Հայի մասին սրիկայաբար դատել ու խօսել։

Որտեղ Հայը օտք է դրել,—ուսում, արհեստ և վաճառականութիւն է ծաղկեցրել։ Փաստերը հենց ռուսաց պատմական աղբիւներում որոնեցէք։

Կովկասը տիրապետելու համար Ռուսիայից եկած զօրքերի մէջ կանգնած էր Հայ եկեղեցականը՝ մի ձեռքում խաչ, միւսում՝ սուր. գոնէ այդ վեհ պատկերից պատկառէին Զուրկները։

Հայ մելիքները... Սակայն արժէ մի քիչ փաստեր թուել և ցոյց տալ, թէ Զուրկներն անամօթ ստախօսներ են։ Մի քանի դրանք հաւաստում են իրենց ասածին. մի քանի դրանց աչքում գէթ ունի իրենց գրածը։ Դրանք բարոյապէս հիւանդ արարածներ են, դրանց համար մի ապագի պատիւը վիրաւորելը դարդակ բան է։ Եւ ցաւալի է, որ դրանց պոռնկագրութիւնը տեղ է գտնում մամուլի մէջ։ Այդ է մի քի մամուլի կոչումը։

Բայց և մենք չենք զարմանում, որ օտարները մեզ Հայհոյում են։ Վէց-եօթը տարի առաջ մեր խաւարամիտ մամուլն ահագին առաջնորդողներով ի լուր աշխարհի հռչակեց, թէ Հայը բարոյականութիւնից զուրկ ազգ է, թէ Հային հաւասար է միայն Հրէան, թէ Հայ արհեստաւորը, վաճառականը, ուսուցիչը, ծառայողը, աղախինը ամենքը, ամենքն անբարոյական, ցած, ստոր, գող մարդիկ են։ Եւ այդ խաւարամիտ ու զուրկամիտ մամուլին մեր մէջ դեռ տեղ ենք տալիս։

Էլի ինչու ենք պահանջում, որ օտարը մեզ պատուի, երբ մենք ինքներս պատրաստ ենք ամենախայտառակ կերպով մեզ անպատուելու։

Անամօթութեան հերոսներին մենք ենք աննդում։

Sapienti sat.

## ՔՐՈՆԻԿՈՆ

Կ. ՊՈԼՍԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ հետեւեալը.

«Այս չորեքշաբթի օր, յուլիսի 30-ին, Նախկին խմբագիրը ևայլն։

Աւէլեայից եկել էին Շարլ Ռուսսէլ, Կլայդէն, Ուիլկոքս («Daily News»-ի խմբագիրներից մէկը), Վատսոն, Ֆլետչէը ևայլն։

Ֆրանսիայից Ադրիէն Նէբուրը («Temps»-ի խմբագիրը), Նոյլ, Մեզիէր, Փիլիս, Բարսէն, Պոլ Կասսանիակը, Կլեմանսոն, Փինիստին, Բատայլ («Figaro»-ի խմբագիրը) և ուրիշ շատերը։

Աւստրիայից՝ Զինգերը—Neue Vienes Tageblatt»-ի խմբագիրը։

Իտալիայից՝ նախկին լուսաւորութեան մինիստր յայտնի Բոնոգին և ուրիշները։

Սպանիայից՝ «Liberal»-ի խմբագիր Բեբեստան։

Պորտուգալիայից «O'seculo»-ի խմբագիր Մագալհէէ Լիման։

Կային ներկայացուցիչներ նաև Նորվեգիայից, Ռուսիայից, Արգենտինեան հասարակապետութիւնից, Բելգիայից հօ կըլինէր ու կըլինէր։

Բացի համագումարին մասնակցելու համար հրաւէր ստացող անձերից կային նաև կողմնակի ուրիշ շատ հրապարակախօսներ, որոնք պատահաբար հիւրի դեր էին խաղում։

Անտվերպէնը պարբերական մամուլի պատմութեան մէջ նշանաւոր դեր է խաղացել. նա է եղել առաջին պարբերական թերթի որդեակը. այժմ էլ նա է հանգիսանում նաև հրապարակախօսների առաջին միջազգային համաժողովի տեղը։ Այդ հանգամանքը տպարտութեամբ լցնում է Անտվերպէնի հասարակութեան, որի զգացմունքների արտայայտիչ դարձաւ քաղաքապետ Վան-Ռիյսէյկը, որ մի եւրտասարդ, 34 տարեկան, Ճարտարախօս վաստակաւոր է։ Նա քաղաքային տան մէջ շամպանեան գինով ընդունելով մամուլի ներկայացուցիչներին, շնորհաւորում է նրանց գալուստը, յայտնում է թէ Անտվերպէնը, այս ազատութեան և առաջադիմութեան քաղաքը, պարծենալով ընդունում է իւր գերկը հրապարակախօսներին՝ հասարակութեան ինտելիգենտ դասակարգի ընտրեալ ներկայացուցիչներին. «մեր քաղաքը բերկրանքով ընդունում է նրանց, որոնք ձգտում են դէպի մտքի ազատութիւնը, մամուլի և խոսքի ազատութիւնը և ամենայն օր կռիւ են մղում այդ գաղափարների համար։ Մամուլը—տասնիններորդ դարի զաւակ է. նրա ոյժն ու իշխանութիւնը բոլոր երկրագնդի վրայ է տարածուում։ Նրա շնորհիւ մենք իմանում ենք այն ամենը, որ կատարուում է տիեզերքի մէջ. նա մեզ ծառայում է թէ ականջի և թէ աչքի տեղ անհուն տարածութեան մէջ։ Անտվերպէնը, որ իրաւամբ պարծենում է, նոր իւր մէջ է լոյս տեսել առաջի քաղաքական և կրօնական ժողովոց անդամք ոստիկաններու միջոցաւ ոստիկանութեան պաշտօնատունը հրաւիրուեցան և պատուէր եղաւ իրենց՝ մինչև 21 օր ընտրելու պատրիարքական տեղապահը. նոյնպէս ոստիկանութեան հրամանաւ նոյն ժողովոց անդամք հինգշաբթի օր, յուլիսի 21-ին, արդարադատութեան գործոց պաշտօնատունը գնացին և հոն ալ միևնոյն հրամանը ստացան։ Այս ժողովոց անդամք չէին ուզեր ընտրութիւնը կատարել, առարկելով թէ իրենց պաշտօնավարութեան պայմանաժամը լրացած է։ Այս առարկութիւնը կ'ընեն, վասն զի անստորագիր նամակներ իրենց չէին ուղարկած նամակները իրենց չէին ուղարկած և պատուիրած են չկատարել ընտրութիւնը։ Տարիքն աւելի է, որ իրենց պաշտօնին պայմանաժամը լրացած է, և իրենք՝ ազգային օրինաց հակառակ՝ կ'ուզուեն նակիչն պաշտօնի վրայ մնալ և ջոջ Խաչիկ Աչըղեան պատրիարքին և հիմա ալ շատ հանդարտ խղճով պիտի կատարէին ընտրութիւնն, եթէ իրենց արգելուած չըլար սպառնալիքներով։ Հիմա երկու սուրի մէջ մնացած են. մէկ կողմէն կարգելուին պատրիարքական տեղապահ ընտրելու, միւս կողմանէ կ'ըհրամայուին ընտրելու։ Տեսնենք ինչ հնարք պիտի գտնին ելից»։

—

Ինչպէս իմանում ենք, Դէորգեան Ճեմարանի նոր տեսուչ պ. Կ. Կոստանեանն այս օրերս ս. Էջմիածնից գալու է Թիֆլիս Ճեմարանի համար ուսուցչական նոր խումբ կազմելու։

—

Օգոստոսի 1-ին ս. Էջմիածնից Թիֆլիս հասնելով, նոյն օրը դէպի արտասահման ուղևորուեցաւ Սրապիօն էֆենդի Մուրադը։

—

Յուլիսի 29-ին Թիֆլիս ժամանեց Փինանսների մինիստրի օգնական գաղտնի խորհրդական Ա. Պ. Իւաչեն-

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՎԸ

—

Մի քանի անգամ փորձեր են եղել հրապարակախօսների համաժողովները կազմելու, բայց չեն յաջողուել։ Սակայն այդպիսի ժողովների կարիքը մեծ էր և օր օրի վրայ աւելի ու աւելի զգալի գառնում։

Եւ յիրաւի. մամուլը բոլոր երկրներում էլ մեծ նշանակութիւն է ստացել. շատ անգամ հասարակական խընդիրները լոկ մամուլի ձայնով են վճռուում։ Հասարակական կեանքի մէջ ոչ մի խնդիր մամուլի սուր աչքերից չէ վրիպում. նա ժամանակի ճշմարիտ Արգոսն է։

Սակայն, չնայելով մամուլի ստացած այդ ոյժին, զգացուում էր, որ ոչ միայն զանազան հրկրների, այլ և շատ անգամ միևնոյն երկրի մամուլի ներկայացուցիչների մէջ ոչինչ կապ հաստատուած չլինելով, դրանից տուժում են թէ թերթերը և թէ նրանց ծառայողները. միշտ զգացուել է բոլոր հրապարակախօսների մէջ ընդհանուր կապ հաստատելու կարիքը։

Արդէն եւրոպական և առհասարակ լուսաւորուած ազգերի մէջ մամուլի ներկայացուցիչները որոշ կապեր ունին հաստատած. կան միութիւններ, ընկերութիւններ, գանձարաններ յատուկ մամուլի ներկայացուցիչների համար։

Բայց այդ ամենը միայն սկիզբն էր ընդհանուր գործի, այսինքն մամուլի համաշխարհային միութիւն հաստատելու. դրանք առաջին քայլերն էին։ Երկրորդ քայլը կարելի է համարել անցեալ տարի նոյեմբերին Լոնդոնում կայացած անգլիացի հրապարակախօսների համագումարը, որին մասնակցելու հրաւէր էին ստացել նաև մի քանի ուրիշ ազգի հրապարակախօսներ, ի միջի այլոց և Էմիլ Զոլան։

Ահա հենց այդ համաժողովում արծարծուում է համաշխարհային հրապարակախօսական ժողով կազմելու միտքը, որ և իրականացաւ այս տարի յունիսի 20-ին Բելգիայի Անտվերպէն քաղաքում։

Համաժողովին մասնակցում էին մօտ 200 հրապարակախօսներ, որոնց մէջ կային շատ նշանաւոր և ընդհանուր եւրոպական հռչակ ստացած անձեր։

Այսպէս օրինակ Դերմանիայից եկել էին Բերլինի մամուլի միութեան փոխնախագահ Օտտո Վենցէլը, նոյն ընկերութեան քարտուղար դոկտոր Շլոհտէը՝ «Vossiche Zeitung»-ի խմբագիր, Ֆրից Դերնբուրգ՝ «National Zeitung»-ի

---

մամուլի առաջին միջազգային համաժողովի տեղը։ Այդ հանգամանքը հպարտութեամբ լցնում է Անտվերպէնի հասարակութեան, որի զգացմունքների արտայայտիչ դարձաւ քաղաքապետ Վան-Ռիյսէյկը, որ մի եւրտասարդ, 34 տարեկան, Ճարտարախօս վաստակաւոր է։ Նա քաղաքային տան մէջ շամպանեան գինով ընդունելով մամուլի ներկայացուցիչներին, շնորհաւորում է նրանց գալուստը, յայտնում է թէ Անտվերպէնը, այս ազատութեան և առաջադիմութեան քաղաքը, պարծենալով ընդունում է իւր գերկը հրապարակախօսներին՝ հասարակութեան ինտելիգենտ դասակարգի ընտրեալ ներկայացուցիչներին. «մեր քաղաքը բերկրանքով ընդունում է նրանց, որոնք ձգտում են դէպի մտքի ազատութիւնը, մամուլի և խոսքի ազատութիւնը և ամենայն օր կռիւ են մղում այդ գաղափարների համար։ Մամուլը—տասնիններորդ դարի զաւակ է. նրա ոյժն ու իշխանութիւնը բոլոր երկրագնդի վրայ է տարածուում։ Նրա շնորհիւ մենք իմանում ենք այն ամենը, որ կատարուում է տիեզերքի մէջ. նա մեզ ծառայում է թէ ականջի և թէ աչքի տեղ անհուն տարածութեան մէջ։ Անտվերպէնը, որ իրաւամբ պարծենում է, նոր իւր մէջ է լոյս տեսել առաջի

---

քաղաքական և կրօնական ժողովոց անդամք ոստիկաններու միջոցաւ ոստիկանութեան պաշտօնատունը հրաւիրուեցան և պատուէր եղաւ իրենց՝ մինչև 21 օր ընտրելու պատրիարքական տեղապահը. նոյնպէս ոստիկանութեան հրամանաւ նոյն ժողովոց անդամք հինգշաբթի օր, յուլիսի 21-ին, արդարադատութեան գործոց պաշտօնատունը գնացին և հոն ալ միևնոյն հրամանը ստացան։ Այս ժողովոց անդամք չէին ուզեր ընտրութիւնը կատարել, առարկելով թէ իրենց պաշտօնավարութեան պայմանաժամը լրացած է։ Այս առարկութիւնը կ'ընեն, վասն զի անստորագիր նամակներ իրենց չէին ուղարկած նամակները իրենց չէին ուղարկած և պատուիրած են չկատարել ընտրութիւնը։ Տարիքն աւելի է, որ իրենց պաշտօնին պայմանաժամը լրացած է, և իրենք՝ ազգային օրինաց հակառակ՝ կ'ուզուեն նակիչն պաշտօնի վրայ մնալ և ջոջ Խաչիկ Աչըղեան պատրիարքին և հիմա ալ շատ հանդարտ խղճով պիտի կատարէին ընտրութիւնն, եթէ իրենց արգելուած չըլար սպառնալիքներով։ Հիմա երկու սուրի մէջ մնացած են. մէկ կողմէն կարգելուին պատրիարքական տեղապահ ընտրելու, միւս կողմանէ կ'ըհրամայուին ընտրելու։ Տեսնենք ինչ հնարք պիտի գտնին ելից»։

—

Ինչպէս իմանում ենք, Դէորգեան Ճեմարանի նոր տեսուչ պ. Կ. Կոստանեանն այս օրերս ս. Էջմիածնից գալու է Թիֆլիս Ճեմարանի համար ուսուցչական նոր խումբ կազմելու։

—

Օգոստոսի 1-ին ս. Էջմիածնից Թիֆլիս հասնելով, նոյն օրը դէպի արտասահման ուղևորուեցաւ Սրապիօն էֆենդի Մուրադը։

—

Յուլիսի 29-ին Թիֆլիս ժամանեց Փինանսների մինիստրի օգնական գաղտնի խորհրդական Ա. Պ. Իւաչեն-

---

Համագումարի նախապատրաստական ժողովը կայացաւ յունիսի 25-ին, Անտվերպէնի Cezcle Artistique, Litteraire et scientifique կոչուած փառաւոր դահլիճում։ Ժողովի գործն էր լինելու ընտրել մի քանի մասնաժողովներ, որպէս զի դրանք մշակեն, պատրաստեն ընդհանուր ժողովներում քննութեան առաջարկուելիք խնդիրները։ Ընտրուում է վեց խումբ, որոնց մէջ մտնում են Ա. խումբ—Սպանիա, Շուէդիա և Նորվեգիա, Դանիա. նախագահը Արմսո-դը-Բերացա և երեք փոխ-նախագահներ։ Բ. խումբ—Գերմանիա. նախագահ՝ Վենցէլ և երկու փոխ-նախագահ, Գ. խումբ—Իտալիա և

կովը, որ եկել է աչքի անցնելու տեղական մաքսատան, արքունի պալատի և պետական բանկի բաժանման գործերը։ Թիֆլիսից պ. Իւանչչենկովը գնալու է Բագու, այնուհետև վերադառնալով գնալու է Բաթում, Նովոռոսիսկ և Հիւսիսային Կովկասի միւս քաղաքները։

—

ԷԼԷՆԵՆԴՈՐՖԻՑ (Գանձակի գաւառ).—Տեղիս գերմանական պաստորըն իրենց երկու ուսուցիչների հետ յուլիսի 29-ին ճանապարհ ընկաւ դէպի ս. Էջմիածին. մտադիր են բարձրանալ Մասիսի գագաթը։

—

ՇՈՒՇՈՒՑ. — Բարձրապատիւ Կիւրեղ ծ. վ. Սրապեանը յուլիսի 26-ին մեկնեց Շուշուց դէպի Տաթև. Տաթևում հայր սուրբը մի քանի օր կմնայ՝ Սիւնեաց հաչակաւոր վանքի հազարամեակի մասին կարգադրութիւններ անելու համար և ապա ս. Էջմիածին կգնայ իւր քննութեան հետևանքները Նորին Օծութեանը ներկայացնելու համար։

Նորին Բարձրապատուութեանն ուղեկցում էր Շուշուց ձիաւոր երիտասարդների մի ստուար խումբ։ Թթու ջրում, որ Շուշուց 19 վերստ հեռաւորութեան վրայ է գտնւում, նախաճաշի համեստ սեղան էր կազմած։ Վեհափառ Հայրիկի կենացի վրայ հայր Սրապեանն զգացուած ճառ խօսեց։ Հայր Սրապեանը երեք շաբաթ Շուշի մնաց և զարմանալի արդարամտութեամբ, անաչառութեամբ ու լրջութեամբ քննեց հոգևոր դպրոցի գործերը։ Դրա համար ամենքը գոհ էին հայր սուրբից։ Դրա համար Շուշում շատերն առանձին հրաւէր ու ճաշ էլ կազմել էին, ինչպէս օր. Մոսկուա բնակ բարեգործ Ժամհարեանը։

Թթու ջրից էլ ձիաւորները բաւականին տեղ ուղեկցեցին հայր սուրբին։

Հայր Սրապեանը Շուշում շատ գեղեցիկ տպաւորութիւն թողեց։ Ժողովուրդը նրա անաչառ քննութիւնից շատ գոհ է։

—

Մայրաքաղաքի Թերթերի ասելով, պատշաճաւոր հաստատութիւնների ներկայացուցիչներից կազմուած առանձին յանձնաժողովում առաջիկայ ձմեռը վերաքննուելու է գիւղական կանոնադրութիւնը։

—

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ.—Սարիղամիշ աւանը լինելով Թիւրքաց սահմանին մօտ և շրջապատուած Սողանլուի ահագին անտառով, աւազակներն այստեղ իրենց ազատ են զգում. կատարում են ամեն տեսակ չարագործութիւններ ու մարդասպանութիւն, նոյն օրն էլ անցնում են սահմանի այն կողմը և ազատւում ռուս իշխանութեան ձեռքից։

Յուլիսի 8-ին Խրամ ձորում բռնեցին մի յայտնի քիւրդ աւազակապետի, որը սարսափ էր տարածել իւր խմբով մեր կողմերում։

Դա իւր ընկերներով գիշերն անցնելիս է եղել այս կողմը։ Գիշերապահ կազակը տեսնելով դրանց՝ նշան է տալիս կանգնելու, բայց քրդերն ականջ չեն դնում և շարունակում են իրենց ճանապարհը։ Գիշերապահը ճարը կտրած՝ հրացան է արձակում. հրացանի ձայնից դուրս են Թափւում պահականոցից կազակները և կռւի բռնւում։ Քրդերը տեսնելով որ չեն կարող դիմադրել, դուրս են գալիս։ Աւազակապետը շարունակում է կռուել, բայց ոտից վէրք ստանալով՝ ընկնում է վայր։ Կազակները կապոտելով նրա ձեռներն ու ոտները՝ բերում են Սարիղամիշ, որպէս զի այստեղից էլ ուղարկեն Կարս։ Նոյն օրն իրիկնադէմին սարսափելի տանջանքներ կրելով աւազակապետը մեռաւ։

—

Կովկասի տեղական իշխանութիւնները «Նով. Վր.»-ի ասելով, խնդրատոյց են եղել վերացնելու ներկայումս գոյութիւն ունեցող միլիցիան և դրա տեղ ոստիկանական ուրեադնիկներ պահելու։

—

ԴՈՒԲԱՑԻՑ.—Յուլիսի 24-ին Կովկասեան Ռոստովից ոչ այնքան հեռու սպանել են Սափար անունով մի աւազակապետի, որ փախած լինելով տաժանակիր աշխատանքներից մի քանի տարիներ շարունակում էր իւր արհեստը մեր կողմերում։ Սափարի սպանող եղել է իւր հակառակորդներից մէկը։ Երկու հակառակորդները ճանապարհին հանդիպում են իրար և հրացան են արձակում իրար վրայ։ Սափարը տեղն ու տեղը սպանուած վայր է ընկնում։ Ոխերիմ Թշնամին դրանով չի բաւականանում և կտրում է գլխակի պարանոցը։ Հրացանաձգութեան ձայների վրայ անմիջապէս հասնում են Սափարի ընկեր աւազակները և մահացնում իրենց գլխաւորի սպանողին։ Յուլիսի 25-ին երկու գլուխներն էլ բերին քաղաք։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ.— Երկու բողոքների հիման վրայ, յուլիսի 27-ին, անվաւեր համարուելով լուծուեցաւ Քութայիսի քաղ. վարչութեան երկու անդամների, այն է՝ Գաբաշվիլիի և Խելտուպովի ընտրութիւնը, իսկ քաղաքագլուխ պ. Լոլուայի ընտրութիւնը կանոնաւոր համարուեցաւ։ Ասում են, որովհետև խրաւասուների մեծամասնութիւնը ներկայումս քաղաքիցս բացակայ է, քաղաքային երկու անդամների վերընտրութիւնը կըկայանայ սեպտեմբերի սկզբներին։ Ամենքի ցանկութիւնն է, որ երկրորդ անգամ ընտրուի հին անդամ Յովսէփ Մուրադեանցը։

— Քաղաքիս անտանելի շոգերը կեանքը Թմրեցնում են, այս պատճառով չկայ առևտուր, չկայ շարժումն, և ընդհանուր յուսահատութիւն է տիրել այս կողմերում. փողոցներում կէս արշին խորութեամբ փոշի է դիզուել։ Խիստ շոգի պատճառով փողոցներում շատերն ընկնում են և նուաղում։

—

ՄԱՐՑԻՑ (Լոռի). — Ցանկիս ամսի սկզբներում «Նոր-Դար»-ին հաղորդած էինք, որ Մարց գիւղում կատաղած շունը սաստիկ վիրաւորեց մէկ միջահաս կնոջն, որին բժշկում են «ալաքլունգով». խոստացած էինք հետևանքի մասին հաղորդել իւր ժամանակին։

Այժմ, որ քառասուն օր է անցել, կատարում ենք մեր խոստումը.

Յիշեալ կինը վիրաւորուելու երկրորդ օրն ընդունեց երեք հատ «ալաքլունգ» մի անգամից, պառկեցաւ մի քանի օր մինչև որ վէրքերն առողջացան և այնուհետև մինչև այսօր առողջ պարապում է իւր տնային գործերով։

Մեր ժողովուած տեղեկութիւններից երևում է, որ Լոռում համարեա ամեն տարի լինում են այդպիսի ցաւալի դէպքեր և վիրաւորածները միշտ բըժշկւում են «ալաքլունգով»։ 30 տարուայ ընթացքում հազիւ Թէ երկու երեք մահուան դէպքեր եղած լինին և այն պատճառով, որ «ալաքլունգ» ուշ են հասցրել հիւանդներին։

---

«Նոր-Դար»-ին Օգոստոսի 1-ից բաժանորդ են գրւում եւ վճարում են 5 ր. 50 կոպէկ։

## ՌՈՒՍԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

Թիւրքմէնիան կարճ ժամանակի ընթացքում զարմանալի արագութեամբ զարգացել է և բարգաւաճել։ Ինչպէս ռուսաց, այնպէս և ամբողջ Եւրոպայի գլխաւոր ուշադրութիւնը Միջին-Ասիայում այս փոքրիկ երկրին է ուղղուած. առանց բացառութեան, ամենքն էլ ճանաչում են Թիւրքմէնիան որպէս բանալի Ասիայի։ Ասիայի մէջ եւրոպական քաղաքակրթութիւն տարածելն այժմս այս երկրին է վիճակուած։ Նա միջնորդ է արևելեան ազգերի մէջ ռուսական ազդեցութեան և առևտրի զարգացման։ Թիւրքմէնիան արևելքի նեղուցն է։ Հնդկաստանը և Պարսկաստանը ոչ հեռու ապագայում գլուխ են խոնարհելու Թիւրքմէնիայի տիրապետութեանը։ Վաղեմի ծաղկած ինքնակալութիւնը, որ ընկաւ ստուար ազգերի իրար չփմամբ, ոտի է կանգնել. աւերակ դարձրած «աշխարհի Թագուհին», որի մէջ յետոյ միայն բուն էր համարձակուել բոյն դնելու, և սրա շրջակայ աւլները, բազմաթիւ ջրանցքները, որ քարուքանդ եղան Բուխարայի Կուշկու-Կուվշուտ-խանի ձեռքով և Աման-զաւ չահի *) ասպատակութեամբ, կրկին իրենց նախկին դրութեան են դարձրած։ Նախկին ալամանչութեան, ստրկավաճառութեան տեղն այժմս բռնել է գիւղատնտեսութիւնը, այգեգործութիւնը, անասնապահութիւնը, երկրագործութիւնը և առևտրական կուլտուրան։ Աւազակաբարոյ, ծոյլ և ձրիակերութեան վարժ ցեղերը, որոնք տասը տարի սրանից առաջ գիշատիչ գազանների պէս պտտում էին ճանապարհներին, եկող գնացողներին Թալանելու համար, այսօր ներկայանում են միմի աշխատասէր և գործունեայ ժողովուրդ։

Եթէ ռուսաց և անգլիացոց արևելքի մէջ բանեցրած քաղաքականութիւնները համեմատենք իրար հետ, ամենայն իրաւամբ կըգտնենք, որ ռուսաց քաղաքականութիւնը աւելի հիմնաւոր և տեղական ցեղերին աւելի շատ է գրաւում, քան անգլիացիներինը։ Անգլիական քաղաքականութիւնն արևելքի մէջ պարսկական քաղաքականութեան շարունակութիւնն է, որ, բաց մեր, կարելի է անուանել եւրոպական լուսաւորութեան կեղծիք։ Անգլիական կառավարութեան քաղաքականութիւնը Միջին-Ասիայում շողոքորթութիւն է, որ միմիայն շոյում և շլացնում է առանց մի հիմնաւոր հետևանք առաջ բերելու։ Աւղանստանի մէջ տիրող անիշխանութիւնը և հազարաների դէմ աւղանական կառավարութեան բռնած քստմնելի դիրքը շատ հեշտութեամբ կարող է տապալել «ինկլեզ» անունն Ասիայում։ Ինչու ռուսական վասալական խանութիւնների մէջ կայ կարգ և կանոն, իսկ անգլիական վասալական խանութիւնների մէջ՝ ոչ երբէք։ Հենց այս հասարակ իրողութիւնը ցոյց է տալիս, որ ռուսաց պետութիւնն աւելի հեռատես քաղաքագէտ է, աւելի է ճանաչում երկրի ցեղերի յատկանիշները և յարմարւում է այդ յատկանիշներին, այնպէս որ այսօր արևելքի ժողովուրդը գըրկաբաց պատրաստ է ընդունել նըրան։ Թէ որքան աջողութիւն ունի ռուսաց քաղաքականութիւնը Միջին-Ասիայում, կարելի է դատել հենց Թէկուզ այն բանից, որ նշանաւոր մոլլաներ Ասիայի խորքում ուրախական աւետումներ են անում ռուսական զօրքի մուտ գործելու առԹիւ։

Այս ամենը կատարուած իրողութիւն

---

*) Վերջինիս համար պատմում են, որ շատ խստիւ էր վերաբերւում դէպի Թիւրքմէն ցեղերը. նա հարկ էր առնում տաւարից, ձիից և ամեն տեսակ չորքոտանիներից, իսկ մատակներից՝ կրկնապատիկ, պատճառաբանելով, որ մատակների հոտից իրենց ձիերը չեն կարողանում արածել դաշտերում։ Մէկ ալևոր Թիւրքմէն, յատուկ այդ նպատակի համար, վեր է կենում գընում Բուխարա. այստեղ նա ծանուցում է տալիս, Թէ ով շուն սպանէ և այդ շունը բերի իրեն տայ, տասը դան վարձատրութիւն կըստանայ։ քաղաքում էլ շուն չի մնում։ Լուր է հասնում Աման-զաւ չահին, Թէ մէկ Թիւրքմէն է եկած, փողով սպանուած շներ է գնում։ Շահը ալևոր Թիւրքմէնին կանչում է իւր մօտ և բացատրութիւն է պահանջում։ «Շահն ապրած կենայ,—ասում է ծերունին,— ես իմ հօտը առաջս արած Շերթափով (Սերախսի մօտ է) անցելիս, գայլերը Թափւում են և սկսում հօտս կոտորել, որքան բղաւում շուն եմ կանչում, ոչ մէկ շուն օգնութեան չի գալիս։ Հիմա ինչ օգուտ, որ այս շները Թափառում են փողոցներում, իսկ հարկաւոր ժամանակ օգնութեան չեն գալ»։ Շահը ծիծաղում է և ասում. «Մի՞թէ Շերթափից այստեղ շան ձայն կըգայ»։ «Շահն ապրած կենայ, բաս մի՞թէ Մերվում արածող մատակի հոտը այստեղ ձիու քթով կ'ընկնի»։ Այսպիսով ծերունին կարողանում է շահի գրած ծանր հարկը վերցնել տալ։

---

Ռուսիա, Նախագահ-Բոնգի, և երկու փոխ-Նախագահ. Դ. խ-ր—Անգլիա և Միացեալ - Նահանգներ. Նախագահ՝ Կլայդէն, և մի փոխ-Նախագահ։ Ե. խ-ր. Բէլգիա, Պորտուգալիա և Հոլլանդիա. Նախագահ Շարլ Տարդիէն, և երկու փոխ-Նախագահ և վերջապէս Զ. խ-ր Ֆրանսիա և Զուիցերիա. Նախագահն է Հերբար, և մի փոխ-Նախագահ։

Այսպիսով վերջանում է հրապարակախօսների առաջին համաժողովի նախապատրաստական նիստը և յաջորդ օրը, յունիսի 26-ին առաւօտեան կայանում է Ա. ժողովը։

* * *

Համաժողովի պարապմունքները կանոնաւորապէս սկսուեցան յունիսի 27-ին, առաւօտեան ժամը 9-ին։ Երկրորդ նիստը բացւում է նոյն օրը ժամը 2-ին և տևում է 2 ժամ։ Այդպէս են լինում և միւս օրերը՝ երեք օր շարունակ։

Առաջին նիստը բացւում է պ. Սինգօ դը-Բերայի նախագահութեամբ։ Առաջին յարուցուած խնդիրը լինում է մամուլի միջազգային միութիւն հաստատելու միտքը։ Խնդիրը Թէև բոլորովին նոր չէր, բայց դեռ մանրամասն մշակուած էլ չլինելով, երկար և տաք վիճաբանութիւնների տեղիք է տալիս, այդ միութեան նպատակը գլխաւորապէս լինելու է այն, որ օտարերկրեայ մամուլի ներկայացուցիչները (աշխատակից, Թղթակից և այլն) պարտադիր աջակցութիւն ստանան տեղական մամուլի կողմից։

Այս առաջարկն ընդունելուց յետոյ յայտնի անգլիացի հրապարակախօս Կլայդէնը կարդաց մի զեկուցում Անգլիայի հրապարակախօսների ինստիտուտի մասին։ Նրա ասելով այդ ընկերութեան նպատակն է բարձրացնել և ազնուացնել հրապարակախօսների դերը։ Կլայդէնի ասելով Անգլիայում ամեն մի հրապարակախօս իրեն համար պատիւ է համարում այդ ընկերութեան բազմաթիւ ճիւղերից որևիցէ մէկի անդամ կոչուելու և հենց այդ կոչումը ամենալաւ գրաւական է համարւում ամեն մի խմբագրի կամ հրատարակչի համար։ Անգլիայում ամեն մի հրապարակախօս այդ ընկերութեան անդամ չէ, բայց ով որ անդամ է, վայելում է յարգ և պատիւ, և վստահութիւն։ Բայց այդ ընկերութեան գոյութիւնը շատ տարի չէ, ընդամենը հինգ տարի է. բայց հենց այդ կարճ ժամանակամիջոցում էլ նա շատ բարձր դիրք է ստացել։ Կլայդէնը համոզուած լինելով, որ գոյութիւն ունեցող բազմատեսակ ընկերութիւններից հրապարակախօսների դաշնակցութիւնը ամենանշանաւորը, ամենաօգտակարն ու ամենաանհրաժեշտը լինելով, հրաւէր է կարդում բոլոր երկրների հրապարակախօսներին միջազգային կապեր հաստատել մտքի և խօսքի միութեամբ աւելի բարձր դիրք ստեղծելու համար. Նա առաջարկում է այդ միութիւնը գլուխ բերել առանց կրօնի և ուղղութեան խտրութեան։

Կլայդէնը իւր զեկուցման մէջ հաղորդեց նաև մի քանի տեղեկութիւններ իրենց միութեան կազմակերպութեան մասին։ Այդ ընկերութեան անդամ կարող է լինել ամենայն ով, որ առնուազն երեք տարի աշխատել է մի որևիցէ Թերթի մէջ—լինի դա խմբագիր Թէ հասարակ լրատու։ Բոլորի իրաւունքներն էլ հաւասար են։ Քաղաքական համոզումների տարբերութիւնը նշանակութիւն չունի։ Կանայք էլ տղամարդկանց համահաւասար իրաւունք ունին։ Այդ ընկերութեան անդամ կարող են լինել նաև օտար Թերթերի աշխատակիցները։ Ընկերութեան կեդրոնը Լոնդոնում է, ուր ամենայն տարի ընդհանուր ժողովի են գումարւում ընկերութեան ճիւղերի զանազան քաղաքներից ուղարկուած ներկայացուցիչները։

Այսպիսի կազմակերպութեամբ մամուլը դառնում է մի տեսակ քաղաքական—պետական հաստատութիւն։

Այս զեկուցումից յետոյ աւելի են զգալի եղաւ հրապարակախօսների միջազգային դաշնակցութիւն հաստատելու կարևորութիւնը։

Նոյն օրը ժամը 2-ին կայացաւ համաժողովի երկրորդ նիստը, ուր Բերարդին, որ Բրիւսէլում հրատարակւող «Indépendance Belge» Թերթի խմբագիրն է, հետաքրքիր զեկուցում կարդաց լրագրական յօդուածների սեպհականութեան մասին։

Ինչպէս յայտնի է, լուսաւորուած ազգերի մէջ լրագիրները յատուկ Թըղթակիցներ ունին աշխարհիս զանազան կողմերն ուղարկած, որոնք իրենց կեանքը վտանգի մէջ ձգելով, ահագին գումարներ ծախսելով զանազան լուրեր, տեղեկութիւններ են ձեռք բերում. Բնական է, որ միայն այդ լրագիրն էլ վայելէ իւր աշխատանքի պտուղը։ Սակայն ճարպիկ մարդիկ կարողանում են խլել այդ արդիւնքը նրանց ձեռքից։ Լրագրական գործը ներկայումս այնքան առաջ է գնացել, որ ամեն մի լրագրի հաղորդած որևէ տեղեկութիւն մի ուրիշ լրագիր կարող է կէս ժամ յետոյ արտատպել և հաղորդել ընթերցողներին,

Զեկուցանողը մանրամասն կանգ առնելով այն խնդրի վրայ, առաջարկում էր օրէնսդրական միջոցով հաստատել լրագրական սեպհականութեան իրաւունքը և երկրորդ կազմել մի առանձին սինդիկատ, որպէս զի այս օրէնսդրական միջոցները ընդունելին ու հսկէ դրա գործադրութեանը։

Համաժողովը հնարաւոր չհամարեց այդ մասին որևէ գրական որոշում կայացնել, միայն ցանկութիւն յայտնեց, որ պետութիւններն այդ մասին ուշադրութիւն դարձնէին։

Սակայն այդ խնդրի առԹիւ գտնուեցան նաև հակառակ կարծիք յայտնողներ էլ. բայց ժողովը չընդունեց նրանց կարծիքը, այլ գտաւ, որ սիստեմատիկաբար մի լրագրի միւս լրագրից կարևոր տեղեկութիւններ գողանալը ազնիւ գործ չէ։

Պէտք է նկատենք, որ ժողովը այդ որոշումը կայացնելիս ի նկատի ունէր, որ ուրիշ լրագիրների տեղեկութիւններից օգտուող լրագիրը յիշում է միևնոյն ժամանակ նաև աղբիւրը։ Հապա ինչ պիտի ասէին այդ ժողովում, երբ իմանային, որ «Նոր-Դար»-ից շարունակ տեղեկութիւններ են գողանում մի կարգի լրագիրներ և աղբիւրն էլ չեն յիշում։

Յաջորդ օրը յունիսի 28-ի առաւօտեան կայացաւ երրորդ նիստը։ Առաջին խնդիրն այն եղաւ, որ մի յանձնաժողով ընտրեն վերև յիշուած խնդիրը մշակելու և յաջորդ նիստերից մինին ներկայացնելու համար։

(Կըշարունակուի)

Միհրան։

լինելուց յետոյ, կասկած չկայ, որ ռուս կառավարութիւնը աւելի և ուշադրութիւն կդարձնի այս երկրի վրայ, որովհետև,—ինչպէս ռուս գրողներից մէկն է ասում—«այստեղ մենք (ռուսները) ունինք այնպիսի մէկ շրջան, որ ամենայն իրաւամբ տիտանեան անունը կարող ենք տալ. արևելքի աշխարհակալները, արևելքին տիրապետելու համար, իրենց զինուորական ոյժերը այստեղ են ժողովել. հենց այստեղ, դէպի այս շրջանը պիտի ուղղենք մեր բոլոր ուշադրութիւնը յանուն ապագայի, որովհետև արևելքի մէջ ռուսաց ազդեցութիւնը տարածելու միակ յարմարաւոր ճանապարհը հենց այս է»։

Դեռ շատ տարիներ առաջ, երբ ռուսները Աստրախանին և Դերբենդին տիրապետեցին, Եւրոպայի մէկ քանի պետութիւններ առաջարկութիւն արին Ռուսիային, որ սա թոյլ տայ իրենց Կասպից ծովի վրայով առևտուր սկսեն արևելքի հետ. Ռուսաց պետութիւնը շատ հեռուն էր տեսնում, ուստի և չէր կարող ընդունել այդպիսի մէկ առաջարկութիւն։

Այժմ իրագործուած է Պետրոս Մեծի նախագիծը *), և Ասիայի բանալին Ռուսիայի ձեռքին է. Հեռու չէ այն րոպէն, երբ ռուսաց հեռատես դիւանագէտների բանագնացութիւններով և կամ ռուսական զէնքի յաղթութեան շնորհիւ ռուսաց կայսրութեան առաջ կբացուին չինական և աւղանական փակ դռները. դրան կըհետևի, անշուշտ, երկաթուղու գծերի շարունը Պարապամիզ լեռան բարձրութեան վրայով դէպի Հերաթ. Այդ ժամանակ արդէն Կոկանում միացած կլինի Սիբերի երկաթուղու ճիւղը կասպեան երկաթուղու ճիւղի հետ. Այստեղից երկաթուղու մի ճիւղ էլ անցկացրած կլինի դէպի Օշ, չինական սահմանագլուխը։

Մելիք-Ադամ.

Կուշկա, 12 յուլիսի.

*) „Прорубая окно въ Европѣ на моряхъ Черномъ и Балтійскомъ, въ тоже время искалъ ключъ и врата ко всѣмъ Азіатскимъ странамъ со стороны Киргизскихъ и Туркменскихъ степей: Аму и Узбой.

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԹԻՒ

Կ. ՊՈԼԻՍ, 23 յուլիսի.—Այսօր պոստի օր է. բայց ազգային լուրերի կատարեալ սով է…

Եւ ինչ նորութիւն, ինչ շարժում կարելի է սպասել մի ժողովրդից, որ դեռ ինքն իրեն չի գտել. Ոմանք դեռ ևս ողբում են փլատակների տակ թաղուած իրեն սիրելիների մահը, ոմանք՝ իրենց կորցրած հարստութիւնը, ուրիշները բաց օդում, մի ձեռք հագուստի մէջ, օրուայ հացի կարօտ՝ չգիտեն թէ ինչ ապագայ է սպասում իրենց. Աւելացրէք սրանց վրայ և՝ առևտրի ընդհանուր անկումը, պարապմունքների վրայ թագաւորող ընդհանուր մեռելութիւնը.

Երկրաշարժն այն ծանր աղէտներից մէկն է, որին կարող չէ հաւասարուել ոչ հրդեհը, ոչ հեղեղը, ոչ տարափոխիկ հիւանդութիւնները… Սրանք՝ իրաւ՝ այրում, հեղեղում են, աւրում, սպանում են, բայց մարդկային հանճարն անզօր չէ սրանց դէմ կռուելու. մարդը կարող է սրանց ծաւալումն արգելել, կարող է փոխել դրանց ընթացքը կամ գէթ միջոց ունի դրանցից փախչելու. Անցան սրանք, շուտով անցնում է և սրանց թողած տըպաւորութիւնը, երկիւղը. մարդը շատ աննշան տարբերութեամբ կրկին վերսկսում է իր սովորական կեանքը, որովհետև այդ աղէտները տեսանելի են, ըմբռնելի են ամենահասարակ ուղեղին անգամ և, որ գլխաւորն է, դրանցով վնասւում է քաղաքի կամ թաղի մի աննշան մասը միայն, մինչ մեծամասնութիւնն անվնաս է մնում թէ նիւթական և թէ հոգեկան տեսակէտից.

Երկրաշարժը, որ տեսանելի է մեզ և որի մասին դեռ շատ քիչ բան գիտենք,—այդ մեր հողագնդի խորքում գործող ոյժը իր անհաւասարելի ահեղ ցնցումներով ոչ միայն մի ակնթարթում ամբողջ քաղաքներ ու ահագին տարածութիւններ է կուլ տալիս, այլ և մի տեսակ յարատև անփարատելի երկիւղով լցնում է մարդուս սիրտը, մանաւանդ հասարակ դասակարգի սիրտը, որի երևակայութեան մէջ իսկոյն ծնունդ են առնում շատ նախապաշարողական ցնորքներ, որպիսի ցնորքներով վերաբերուել են դէպի բնութեան երևոյթները ոչ միայն մեր նահապետական պապերը, այլև ներկայ տասն և իններորդ դարու մեր հայերը.

Չենք կարող հաւատալ թէ այդ դասակարգի խաւից բարձր գտնուողների նոյն վայրկեանի զգացածը շատ էլ տարբեր եղած լինի ամբոխի զգացածից.

Օրինակով ապացուցենք այդ.

Վերջերս Շուկայի փլատակների տակից ողջ առողջ դուրս են հանում երեք հոգի. սրանք իրենց մըթին գերեզմանից լոյս աշխարհ դուրս գալով, երբ իրենց շուրջը մարդկային դէմքեր են տեսնում, կարծում են թէ ցնորքի մէջ են. ծծում են իրենց աչքերը, ապշութեամբ նայում են իրենց ազատիչներին և ապա մրմնջում «միթէ դեռ աշխարհս չի՞ վերջացել… դեռ կենդանի մարդի՞կ կան»…

Սա միայն այդ երեքի համոզումը չէր. այսպէս է մտածել հասարակ դասակարգը, որ աշխարհիս ծագման և և վախճանի մասին գիտնական գաղափար չունի.

Գիտնական կամ որոշ զարգացութիւն ունեցող դասի վայրկենական զգացումը ամփոփելու համար, կը բաւականանանք ներկայացնել մեր ընթերցողներին Փրանսիացի ծանօթներից մէկի խօսքերը, որ համալսարանական կրթութեան տէր մի անձն է և որը իր մի ուրիշ ընկերոջ հետ շարժի ժամանակ գտնուելիս է եղել նաւակի մէջ՝ ջրի վրայ.

«Ֆրանսիական շոգենաւից վերադառնում էինք Ղալաթիայ՝ ցամաք դուրս գալու. ափից բաւական հեռու էինք, երբ այնպէս թուեց մեզ՝ թէ մի ինչ-որ ծանր բանով խփեցին մեր նաւակի յատակին կամ նաւակը զարկուեց ինչ-որ բանի. Նոյնն էր մտածել և թիավարը, որովհետև իսկոյն շտապեց նաւակի ընթացքը շրջել. Դա շարժի առաջին ցնցումն էր. Երկրորդ և երրորդ ցնցումների ժամանակ աչքս դէպի ափն էր և ես սարսափով տեսայ թէ ինչպէս ամբողջ տները՝ ծովի մեծ ալիքների վրայ գտնուող նաւի նման բարձր ու ցած էին լինում, աջ ու ձախ էին թէքւում. Այդ տարօրինակ տեսարանի տպաւորութեան տակ ընկերոջս հետ փոխանակած խօսքս այն եղաւ՝ թէ Կ. Պոլիսը կարող է թաղուել ջրի տակ, ինչպէս պատահել է շատ քաղաքների հետ և որոնց մասին կարդացել էի շատ անգամ…»

Այն ամեն ոք իրաւունք ունէր այսպէս մտածելու յենուելով տեղի ունեցած այստեսակ բազմաթիւ աղէտալի օրինակների վրայ. Պէտք է խոստովանել, որ իմ նոյն վարկեանի զգացածն էլ նոյնն էր, մանաւանդ որ դեռ քսան և չորս ժամ չկար, որ «Նոր-Դար»-ի բանասիրական բաժնում կարդացել էի «Աշխարհիս վախճանը» վերնագրով յօդուածները և երկրաշարժի կատարած աւերմունքների տպաւորութիւնը դեռ թարմ էր ուղեղիս մէջ.

Ո՞վ կարող է լիովին ապահովեցնել թէ Կ. Պոլսը երբ և իցէ զոհ չպիտի դառնայ մի այդպիսի աղէտի. Նրա աշխարհագրական դիրքն ու՝ ինչպէս գիտնականները ապացուցանում են, իր կրծքում անքուն հսկող հնոցը, որ շատ շատ մի քառորդ կամ կէս դարը մի անգամ ցոյց է տալիս Պոլսին իր ոչ-ցանկալի գոյութիւնը,—սրանք կասկածելի նշաններ են. Լաւ չեմ յիշում թէ ո՛ր մի գերմանացի գիտնական իր մի աշխատութեան մէջ արդէն մի այդպիսի գուշակութիւն արել է Կ. Պոլսի մասին, աւելացնելով միևնոյն ժամանակ՝ թէ արևելեան հարցը այդպիսով պէտք է լուծուի.

Շատ ճանապարհորդներ դիտած կըլինեն, որ Սև ծովի բերանից սկսած եթէ ոչ մինչև Եգէականը, այսինքն մինչև Դարդանէլի միւս բերանը, գոնէ ամբողջ Բոսֆորն ու Ոսկեղջիւրը իրենց գոյութիւնը ստացել են երկրի կրծքում անքուն գործող մի այդպիսի հզօր ոյժի ձեռքով. Ջնայելով որ անյիշատակ ժամանակներից ի վեր Բոսֆորի ջրերը ողողում են իրենց ափերը, այնուամենայնիւ այսօր նոյն իսկ եթէ նրա Ասիական և Եւրոպական եզերքը մօտեցնենք, այնպէս կը փակչեն միմեանց, ինչպէս կը փակչէին խեցեղէն ամանի կոտրած կամ պատռուած թղթի երկու կտորները. Եւ սա բաւական ապացոյց է՝ թէ բնութիւնը սրան իր խաղաղ կեանքով չէ ստեղծել և թէ դա անդրպատմական ժամանակների չափ էլ հին չէ.

Իհարկէ, այսպէս դատելով մենք ամենևին միտք չունինք Կ. Պոլսի բնակիչներին ահաբեկել. Դա բնութեան ձեռքին է և բարեբաղդաբար բնութիւնը շատ հազիւ է կրկնում այդպիսի աշխարհաւեր կատակներ, իսկ մարդկութիւնն էլ իր կարգում այնքան առաջադիմում է, որ կարող ենք համարձակ ենթադրել՝ թէ կը գայ ժամանակ, երբ մարդը երկրաշարժից առաջանալի աւերումների առաջն էլ պէտք է առնի.

Բացի այդ, մենք աւելի պատճառ ունինք վախենալու ուրիշ շատ սովորական մահերից, քան Կ. Պոլսի հետ թաղուելու մահից. Մենք քնում ենք և չգիտենք՝ պէտք է զարթնե՞նք կամ փողոց ենք գնում և չգիտենք՝ թէ թէ տուն պիտի վերադառնա՞նք, որևէ անակնկալ պատահարի, մի չար սրի, գնդակի կամ այլ մահաբեր բանի չպէ՞տք է զոհ գնանք. Ամեն մի անհատի համար այսպիսի մահերն աւելի սովորական և սպասելի են, քան երկրաշարժից առաջանալիք մահը. բայց և այնպէս «Թերևս մի ժամ յետոյ մեռնիմ» ասելով, ոչ ոք չէ ընդհատում իր առօրեայ գործերը. պարապմունքն, աշխատանքը երեսի վրայ ձգելով, ոչ ոք ձեռքերը ծալած չէ սպասում մահին.

Քանի ողջ ենք, քանի որ ոյժ ունինք, պէտք է աշխատենք, պէտք է գործենք.

Հայերը, մանաւանդ այսօր հազար եռանդով գործելու պէտք ունին. մի ազգ այն ժամանակ է մեծ, այն ժամանակ միայն գոյութիւնը պահելու իրաւունք ունի, երբ աղէտներից Ադամի մերկութեամբ դուրս գալուց յետոյ, իր տոկունութեամբ, իր անխոնջ ու եռանդուն գործունէութեամբ կըտրայի կարճ ժամանակի մէջ լցնել այն բոլորի տեղը, ինչ որ բնութիւնից կամ այլ տեղից առաջացած աղէտը խլել էր նրանից. Եւ Հայը միթէ մի՞ անգամ է մերկացել իր ունեցածից. Նրա տեսած սրածութիւնները, նրա կրած հալածանքները, նրա ողբացած աւերակները հուր ու սրից—թերևս չէ տեսել և ոչ մի ազգ, բայց նա միշտ կանգուն է մընացել. միշտ լցրել է տուած աւարի տեղը և անհաւասարելի եռանդով վերականգնել է իր աւերակները…

Այդ արել է աշխատութեամբ.

Կ. Պոլսի հայն ևս շուտով կարող է վերստանալ իր կորցրածը, եթէ եռանդով գործ սկսելու լինի. Մի անգամ կրկնածը այստեղ էլ կասենք. վնասը մեծ է, այնքան մեծ, որ դըրսից եկած նպաստները նրա տեղը լըցնել չեն կարող. Յունիս 28-ի երկրաշարժը Կ. Պոլսի և շրջակայքի մէջ աւելի քան 10 միլիոն տաճկական լիրայի վնաս պատճառեց, որ կանէ 1080 միլ. դահեկան, կամ 85 միլիոն ռուբլի. Այս գումարը կը կրկնապատկուի, եթէ հաշուի առնենք առևտրական գործերի ներկայ անկեալ վիճակից առաջացած վնասը. Բայց սրա փոխարէն մինչև այսօր հազիւ թէ 2 միլիոն դահեկան նպաստ է ժողովուել. Դեռ հարց է այդ նպաստները բարեխիղճ կերպով պէտք է բաժանուի՞ն՝ կասկածելի է. Բնութեան այդ ահեղ պատահարից օգտուելով, որոնք յօգուտ իրենց գրպանի շատ զեղծումներ են գործում, ինչպէս օրինակ քանդուած շինութիւնը անվտանգ, իսկ անվտանգը քանդուած են ներկայացնում կառավարութեան. Ուրեմն էլ ինչպէս կարելի է յոյս դնել դրսից եկած և օտարի ձեռքով բաշխուելիք նպաստի վրայ.

Ինքնասիրութիւնն ամենամեծ նըպաստն է. Յոյս ունինք թէ Կ.Պոլսի հայ ժողովուրդը իր յոյսն աւելի շատ իր վրայ կը դնի, քան ուրիշի վրայ.

* *

# ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԿԱԶԵՐԻՕՆ ԵՐԴՈՒԵԱԼՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

—

Օգոստոսի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին Կազերիօյին, Կարնոյի սպանողին, ներկայացրին Լիօնի երդուեալ դատաւորներին. Դատարանում հասարակութեան համար նշանակուած տեղերը, ուր թողնում էին տոմսակներով, լիքն էին. Նոյնպէս բռնուած էին մամուլի ներկայացուցիչների բոլոր տեղերը.

Կազերիօյին դահլիճ ներս տարան հինգ ժանդարմներով շրջապատած. Հասարակապետութեան նախագահի սպանողը համեստութեամբ կանգնեց իր համար նշանակուած տեղում. Ամենքի աչքերն ամենամեծ հետաքրքրութեամբ յառած էին նրա դէմքին. Կազերիօն երեսին դեռ մազ չունեցող, աղքատ հագնուած պատանի է. Նրա հագուստը սպիտակ կուրտկա է և մոխրագոյն գլխարկ. Կեղծ ժպիտով նա նայեց իր շուրջը և ամօթխածութեամբ հանեց գլխարկը. Գլխի մազերը կարճ խուզած էին, ականջները բաւական մեծ են, քունքերը դուրս ընկած, աչքերը խոր ընկած և քիթը սուր. Ֆրանսերէն շատ վատ է խօսում, յաճախ թարգմանի օգնութեան է դիմում. խօսում է խելօք, զսպած և քաղաքավարութեամբ.

Դատարանի նախագահն սկսում է հարցուփորձ անել.

Կազերիօն ոչինչ չի պատասխանում.

Նախագահ.—Ձեզ ուզում էին ներկայացնել ասկետ և կանանց թշնամի, բայց 1893 թուին դուք պառկած էիք հիւանդանոցում. Ընդհանրապէս ձեր առողջութիւնը լաւ է եղել.

Կազերիօ.—Այո.

Նախագահ.—Ես այս հարցը տալիս եմ, որովհետև ձեր պատասխանատուութիւնը քրէական է.

Կազերիօ.—Ես ուզում եմ կատարելապէս պատասխանատու լինել.

Նախագահ.—Դուք թողել հեռացել էք ձեր ընտանիքից, որ իզուր աշխատելիս է եղել ձեզ հեռացնել անիշխանականութիւնից.

Կազերիօ.—Մօրս ես սիրում եմ, բայց իմ ընտանիքը—ամբողջ մարդկութիւնն է. Բոլոր մարդիկը—մի ընտանիք են կազմում.

Նախագահ.—Ձեզ ծանօթ են իտալական ամենանշանաւոր անիշխանականները.

Կազերիօ.—Շատ էլ ծանօթ են, բայց ես նրանց անունը չեմ յայտնիլ. Ես ոստիկանական պաշտօնեայ չեմ.

Նախագահ.—Ոստիկանութիւնը իր պարտքն է կատարում.

Կազերիօ.—Ես էլ իմ պարտքն եմ կատարում. Գործակիցներիս մասին այլ ևս ոչինչ մի հարցնէք. Մի անգամ առ միշտ տուի պատասխանը.

Նախագահ.—Մի անգամ դուք արտասուք էք թափել Միլանի թատրոնում, մի դրամայի ներկայացման ժամանակ, որի մէջ պատկերացնում էր Մարի Անտուանէտայի մահուան պատիժը, և այնուհետև դուք ինքներդ սպանեցիք երկրի պետին.

Կազերիօ.—Այդ բոլորն ես կըբացատրեմ վերջին ճառիս մէջ.

Նախագահ.—Դուք ձեր հայրենիքից փախել էք, որպէս զի զինուոր չը գնայք.

Կազերիօ.—Իմ հայրենիքը—ամբողջ աշխարհն է.

Նախագահ.—Դուք Լիօն եկաք այն ժամանակ, երբ հանդէսներ էին կատարւում. Միթէ չգիտէիք, որ այդ օրը Սոլֆերինի պատերազմի տարեդարձն էր.

Կազերիօ.—Պատերազմը եղբօր դէմ ապստամբութիւն է.

Երբ հարցուփորձ էին անում Լերլան անունով զինուորին, որ պնդում էր, թէ Կարնոյի սպանումն անիշխանականների դաւադրութեան մի գործ է, որին մասնակից էր Կազերիօն, մեղադրեալը միայն արհամարհական կերպով արտասանում էր ատամների միջից. «Լերլանը հասարակ զինուոր է, ուզում է կապրալ դառնալ. Դա ծաղրածու է և պարիզեցի». Մեղադրող իշխանութիւնը նշանակութիւն չի տալիս Լերլանի ցուցմունքին և այնուհետև բոլորովին թողնում է դաւադրութեան մասին կասկածը.

Անկեղծ ցինիզմով Կազերիօն ասում է, որ եթէ իրեն չաջողուէր սպանութիւնը, նա կվերադառնար Սեթտա և երկրորդ անգամ կփորձէր իր «բաղդը».

Վկաների ցուցմունքից, ի միջի այլոց, երևաց, որ Կազերիօյի անիշխանական դառնալուն շատ նպաստել է մեծ մարդ լինելու ցանկութիւնը. Հիւանդանոցում նա երկար ժամանակ հրճւում էր Ռաւաշոլի, Պելլասի, Վալեանի և Անրիի պատկերներով.

Նախագահը թոյլ չտուեց, որ Կազերիօն գրաւոր կերպով կարդայ իր բացատրութիւնները.

Պոդրէյդէր փաստաբանին Կազերիօն հետևեալ մերժողական նամակն է գրել.

«Iliustrissimo signor advocato Podreider! Կարդալով ձեր հեռագիրը, պատասխանում եմ. չեմ կամենում, որ դուք հետազօտէք իմ մօրն ու եղբայրներին, նրանց խելագար դուրս բերելու համար. Նրանք երբէք խելագար չեն եղել, ինչպէս նաև ես չեմ եղել. Հասարակապետութեան նախագահին սպանեցի յանուն անիշխանականութեան. Ցարգանօք Կազերիօ Սանտո».

Ժամը 12-ին 5 րոպէին երդուեալները հեռանում են խորհրդակցելու և քառորդ ժամից դուրս գալով յայտնում են դատարանի վճիռը, որով Կազերիօն մահուան պատժի պէտք է ենթարկուի. Մահուան պատիժը պիտի կատարուի Լիօնի հրապարակներից մէկում.

Կազերիօն աշխատում է հանգիստ մնալ. Երբ նրան դատարանի դահլիճից դուրս են տանում, նա շուռ է գալիս և բացականչում է. «Քաջ ե-

զէք, ընկերները, կեցցէ՛ անիշխանակուԹիւնը»։

Կազերիոլի մահուան պատիժը, ինչպէս հեռագրում են Պարիզից, նշանակուած է օգոստոսի 4-ին (16-ին)։

—

## ՔԱՂԱՔԱԿՆ ԼՈՒՐԵՐ

Կրետէ կղզում այս օրերս սպանուԹեան փորձ են արել ընդհանուր-նահանգապետ Մահմուդ-փաշայի կեանքի դէմ։ Նա ծանր վիրաւորուած է և ակնյայտ է պաշտօնը թողնել։ Ասում են, որ այդ սպանուԹեան փորձը ընդհանուր ապստամբուԹեան յայտարար է։

—Չինաստանը մեծ քանակուԹեամբ ռազմամԹերքների պատուէր է տուել Լօնգօնում։

—Անիշխանականների դէմ Ֆրանսիայում հրատարակուած նոր օրէնքներն այն հետևանքն ունեցան, որ այժմ Զուիցերիան լցուում է անիշխանականներով, Ցիւրիխը, Ժընևը և մանաւանդ Լուգանոն օտար երկրեայ անիշխանականների կեդրոն է դարձած։ Լուգանոյումն է այժմ Միլանի փաստաբան Գորին, Կազերիոլի ուսուցիչը, և ուրիշ վտանգաւոր պրոպագանդիստներ։ Զուիցերական ոստիկանուԹիւնն ամբողջ ժամանակը ոտի վրայ է։ Նրան օգնում են Ֆրանսիական և իտալական ոստիկանուԹեան գործակալները։ Բոլոր անիշխանականները խիստ վերահսկողուԹեան տակ են։

—Չինաց կայսրը մի հրովարտակ է հրատարակել պատերազմի մասին, որի մէջ ասում է, որ կոչնչացնի Ճապոնացիներին, որոնք պատասխանատու են այսքան արիւնհեղուԹեան։ Կայսրը տեղեկոնսուելու է Թէան Շին, ուր բոլոր միսիոնական զինուորները գլխատուած են։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հին յունական երաժշտութիւն.—Կիևվի գիմնազիայի վերատեսուչը, ինչպէս հաղորդում են տեղական ԹերԹերը, ստացել է Դելֆիայում վերջերս գտնուած Ապողոնին ձօնած օրհներգի մի պատճէնը։ Նա մտադիր է այն օրհներգին տալ երաժշտական խմբի ձայնակցուԹիւն և միւս տարի բեմից ծանօԹացնել Կիևվի հասարակուԹեան՝ այդ օրհներգի հետ։ Սկզբում պէտք է երգուի այն եղանակը, ինչ եղանակով որ երգել են հին յոյները, իսկ յետոյ արդէն՝ նուագարանական խմբի ձայնակցուԹեամբ։ Նախ քան այդ հետաքրքիր համերգի լինելը, վերատեսուչը պէտք է դասախօսէ հին յունական երաժշտուԹեան և ժամանակակից երաժշտուԹեան կապակցուԹեան մասին, որի կենդանի պատկերն է լինելու նուիրական օրհներգի երկու տեսակ կատարումը։

—

Վիրխովի հետաքին.—1900 Թ. Պարիզում կայանալի համաշխարհային ցուցահանդէսին պատրաստ կըլինի մի հետաքրքիր էջ, որ իւր մեծուԹեամբ կըգերազանցէ գոյուԹիւն ունեցող բոլոր հետազօտականներից։ Հսկայական գետակի խողովակի երկարուԹիւնը կըլինի 40 մէտր, լուսնին գիտելիս՝ մի աշխարհագրական մղոն հեռաւորուԹեան վրայ կանգնած կԹուայ։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### «ՆՈՐ-ԴԱՐ»Ի

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի.—Ռուսաց ընդհանուր հիւպատոսարանը հաղորդում է, որ Մարսէյլում անցեալ չաբաթ խոլերայով հիւանդացուել մի քանի կասկածելի դէպքեր են եղել. 6 օրում հիւանդացել են 14 հոգի և բոլորն էլ մեռել են։

Յուլիսի 28-ին Զմեռայինն պատասում չնորհաւորուԹիւնները էին հոում Մեծ Իշխան Ալէքսանդր Սիհայիլովիչին և Մեծ Իշխանուհի Կսենիայ Ալէքսանդրովնային։ Օրուայ ժամը 1-ին Նոցին Կայսերական ՄեծուԹիւնները Թագաժառանգի և Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի հետ նաւով Պետերհոֆից Պետերբուրգ ժամանեցին։ Նորապսակները ժամանեցին Բալտեան երկաԹուղու գծով։ Պետերբուրգի փողոցները զարդարուած էին դրօշակներով, գորգերով և կանաչով. ահագին բազմուԹիւն էր սպասում երկաԹուղու գնացքին։ Ամենայնի պատի գահլիճներում հաւաքուած էին դիպլոմատիական ներկայացուցիչները, պալատական և քաղաքի տիկնայք, ս. սինոդը, պինուորական և քաղաքացիական բարձր պաշտօնեաները, սվիտան, բարձրագոյն պալատի առաջին և երկրորդ կարգի աստիճանաւորները, գվարդիայի գեներալները, չտար. սպաները և գվարդիայի բոլոր մասերից մի-մի ուազ-սպայ, զօրքի գեներալները և ծովակալները, նահանգական և գաւառական ազնուականուԹեան պարագլուխները և պատգամաւորուԹիւնները։ Պետերհոֆի Թատրոնում ներկայացում եղաւ. ամբողջ Թատրոնը Թաղուած էր կանաչի և ծաղիկների մէջ. Թատրոնի կտրանը չինուած էր ռուսաց գերբը էլեկտրական լապտերներից. Թատրոնի չուրջը փառահեղ լուսավառուԹիւն կար։ Ներկայացումը բաղկացած էր «Ռոմէո և Ջիւլիէդ» օպերի 2-րդ գործողուԹիւնից և «բուսական աշխարհի սեռափոխումն» բալետից։ Թագաւոր Կայսրը Մեծ Իշխանուհի Քսենիա Ալէքսանդրովնայի պսակադրուԹեան առԹիւ 7,143 ր. նուիրեց Պետերբուրգի աղքատներին բաժանելու համար։ ՇնորհաւորուԹիւնները ընդունում են կոնցերտի դահլիճում։ Չինուորականներին գլուխ էր անցած Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը, ծովացիներին—Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչը, Պրէօբրաժէնեան զօրքի ներկայացուցիչներին—Թագաժառանգը և Մեծ Իշխան Կոստանդին Կոստանդինովիչը, ռմբաձիգներին—Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչը, գվարդիական հեծելազօրի ներկայացուցիչներին—Նիկոլոյ Նիկոլոյևիչ, Պաւէլ Ալէքսանդրովիչ և Դմիտրի Կոստանդինովիչ Մեծ Իշխանները։ Նորապսակներին ներկայացող պատգամաւորները մատուցում էին աղ ու հաց արծաթէ սկուտեղների վրայ։ Նորապսակ Զոյգը կանգնած էր ընդունում շնորհաւորուԹիւնները, շնորհաւորողները մօտենում, համբուրում էին Մեծ Իշխանուհու ձեռքը և գլուխ էին իջեցնում Մեծ Իշխաններին։ Մեծ Իշխանը գվարդիական նա ատորմղի պաշտօնեայի հագուստով էր։ Հանդէսը վերջանալուց յետոյ Նորապսակները հեռացան իրենց սենեակները և յետոյ գնացին Կազանեան տաճարը։

ՀՌՈՄ.—Պաշտօնապէս յայտարարուած է, որ Իտալիան չեզոք է մնում Ճապոնական-չինական պատերազմի վերաբերմամբ։

ՊԱՐԻԶ.—Դիժոնում երդուեալների դատարանը երեք անիշխանական պրոպագանդա անելուն և կազերիոլին գովաբանելուն համար, գատապարտեց զանազան պատիժներին—5 տարի ժամանակով տաժանակիր աշխատանքներից սկսած մինչև 3 տարի ժամանակով բանտարկուԹեան։

ՇԱՆՀԱՅ, 30 յունիսի.—Ամէն իջան Ճապոնական զօրագնդից, մէկը 12,000 հոգուց բաղկացած—Ֆուզանում, իսկ միւսը 8000 հոգուց բաղկացած—Իւզանում. Իզբչիի զօրքերը գնում են դէպի Սէուլ և պէտք է յետ մղեն հիւսիսից եկող չինական զօրքերը։

ՉԻՖՈՒ.—Ճապոնական նաւախումբն այսօր առաւօտեան յարձակուեց Վէյ-Հայ-Վէյի վրայ. Ճապոնացիների առաջին յարձակումը յետ մղուեց. այժմ Ճապոնացիները երկրորդ յարձակումն են պատրաստում։

ԲԵԼԳՐԱԴ.—Այսօր այստեղ է գալիս Թագաւոր Միլանը։

ԱՐԻԱՆԴԵԼՍԿ, 31 յունիսի.—Այս օրերս այստեղից «Վինդվորտ» չոգենաւով Ֆրիդերիկ Զակսոնի առաջնորդուԹեամբ Ճանապարհ ընկաւ հիւսիսային Բևեռային մի արշաւախումբ, որ կազմակերպուած է Ալֆրեդ Հարմսվորտի միջոցներով։ Արշաւախմբի գլխաւորը նպատակն է գիտնական հետազօտուԹիւն ենԹարկել Ֆրանց Իոսիֆի հողերը։ Արշաւախումբն այստեղից վերցրեց տաք հագուստ և բնակուԹեան համար առանձին վրաններ։

ՎԻԵՆՆԱ.—Թագաւոր Միլանն այսօր այցելեց գրաֆ Կալնոկիին, որի հետ երկարատև խորհրդակցուԹիւն ունեցաւ։ Միլանը վաղն ուղեւորում է Նիշ և մշտապէս կ'ապրի Սերբիայում։

ԼՈՆԴՈՆ.—Ճապոնացիները երէկ ռմբակոծեցին «Արտուր» նաւահանգիստը, բայց յետ մղուեցան։

ՄԱԴՐԻԴ.—Մագազանի չղջակայքում մարդկային ցեղերի մէջև խիստ յուզում է տիրում։ Մագազանի նահանգապետը երկիւղ է կրում յարձակումից։ Եւրոպալի գաղԹականները պահանջում են, որ զինուորական նաւեր գան։

ԱԼՃԻՐ.—Ձերբակալուած են 12 անիշխանականները, որոնք մեծ մասամբ իտալական և գերմանական հպատակներ են։ Նրանք ուղարկուելու են Ֆրանսիա արտասահմանի արտաքսելու համար։

Խմբագիր—հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### Հոգենաւերի

ԵրԹևեկուԹիւնը Բաթումի և Օդեսայի միջև մայիսի 8-ից սկսած.

—

ԲԱԹՈՒՄԻՑ ՕԴԵՍԱ ԴՆՈՒՄ է չաբաթ գիշեր, ժամը 2 ին, չընդհատուած գծով. հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

ԵրկուշաբԹի գիշեր, ժամը 2-ին, չընդհատուած ընԹացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Իրակի օրերը, երեկոյեան 11½ ժամին, ճեպընԹաց գնացքով, ԵալԹայի և Սեւաստոպոլի վրայով։

ՀինգշաբԹի, ցերեկը ժամը 12-ին, Նովոռասիյսկի և Կերչի վրայով։

ՕԴԵՍՍԱՑԻՑ ԲԱԹՈՒՄ ԴԱԼԻՍ ԵՆ

Իրակի, երկուշաբԹի, ուրբաթ օրերը, երեկոյեան, չընդհատուած ընԹացքով։

Ուրբաթ օրերը՝ ճեպընԹաց գնացքով։

ՉորեքշաբԹի առաւօտեան ուղիղ գծով։

«Ռուսկոյէ» ընկերուԹեան գործակալուԹիւնը գտնւում է Թիֆլ. Ամն. բանկի ալիրէյում, №№ 117 և 118.

### Երկաթուղու գնացքներ։

—

*Թիֆլիսից Բաթում դնում է*

Մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաթում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին։ Պոստային գնացքն երեկոյեան 6 ժամ 50 րոպէին։ Բաթում հասնում է 8 ժ. 15 րոպէին։

*Բաթումից Թիֆլիս գալիս է*

Մարդատար գնացքն առաւօտեան 9 ժ. 40 րոպէին։ Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին։ Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է ցերեկը ժ12 ամ 25 րոպէին։

*Թիֆլիսից Բագու դնում է*

Պոստային գնացքը ցերեկը 1 ժամ 10 րոպէին, Բագու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր.։

*Բագուից Թիֆլիս գալիս է*

Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին։ Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին։

*Թիֆլիսից Գանձակ դնում է*

Ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ. 27 րոպէին, Գանձակ հասնում է առաւօտեան 7 ժ. 40 ր.

*Գանձակից Թիֆլիս գալիս է*

Ապրանքակիր-մարդատար գնացքն երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին։

*Թիֆլիսից Ախալցխա գնում է*

Մարդատար-ապրանքակիր գնացքը ցերեկը ժամը 3-ին, Մինջալոո հասնում է երեկոյեան 7 ժ. 15 ր.։

*Մինջալոյից Թիֆլիս գալիս է*

Ապրանքակիր մարդատար գնացքը գիերը 1 ժ. 30 ր. Թիֆլիս գալիս է առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՇՈՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ

Համար հարկաւոր է ԵրգեցողուԹեան ուսուցիչ։ Պայմանների համար դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատուն։

(624) 5—1.

**ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ** հարցաքննուԹիւններն և վերաքննուԹիւններն սկսուելու են օգոստոս ամսի 20-ին։

Նոր աշակերտ մտնելու համար պէտք է խնդիր տալ հոգաբարուԹեանը, ներկայացնելով մետրիքական և ծաղկի պատուաստման վկայական, իսկ միջասեան կամ երկդասեան ուսումնարաններում աւարտող աշակերտները պարտաւոր են ներկայացնել և իրենց ուսման վկայականը։

ՀերԹական հոգաբարձու Գ. Աբիմեանց

(622) 3—3

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտուԹիւն ընդհանրուԹեան, որ այն 1894 Թուի օգոստոսի 5-ին, օրուայ ժամը 12-ին, քաղաքային վարչուԹեան շինուԹեան մէջ աճուրդ է լինելու կապալով տալու աթիՔները քաղաքային սիւներին կպցնելու համար։

Կապալի պայմանների մասին կարելի է տեղեկանալ քաղաքային վարչուԹեան կանցելեարիայում ամեն օր ժամը 12-ից մինչև 1-ը

(307) 3—3

ՀՈՎԱՆՈՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

ԴՈՐԾԱՐԱՆՏԸՐ

ԻԼԻԱ ՊԵՏՐՈՎԻՉ

ՊԵՏՐՈՎԻ

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Հովանոցների և ձեռնասանդարների մեծ քանակութեամբ և կատարեալ վարձման։ Ասպետ քանակութեամբ գերազանց տեսակի։

Իլինկա, Ջերկասկի փողոցի անկիւն, Վոսկրեսենսկօյէ պոդվորիէ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԱԳՈՐՈԴՈՒՄ

Մակարեա աղօթատուն և Երմոչկի ֆլագների դիմաց, խաչուղու վրայ, նախկին Մուսատովի խանութ։

№ № 2 և 3.

(274) 25—23

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրԹուԹիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական ՏնտեսուԹիւն, 2) Առևտրական ԹուաբանուԹիւն, 3) ՀաշուապահուԹիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) ԹուաբանուԹիւն համրիչի վրայ, 5) Առևտրական ԹղԹակցուԹիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրուԹիւն և 7) ԴեղագրուԹիւն, (վատ ձեռքի—почеркъ—ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ ԸնդունելուԹիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում Ալէքսանդր Բրիգոնովի տանը № 9, Սերգիևսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисѣ. С. П. Мануэльянцу.

(600) 25—10

Дозволено цензурою. Тифлисъ 1-го августа 1894 Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова Гол. пр. домъ Читахова.